ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«----»---------- 2010թ. N ---Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1.Սահմանել Երևան քաղաքի խորհրդանիշները՝

1) զինանշանը (նկարագիրը՝ համաձայն N 1 հավելվածի).

2) դրոշը (նկարագիրը՝ համաձայն N 2 հավելվածի).

3) օրհներգը (համաձայն N 3 հավելվածի):

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ N 1
Երևանի ավագանու
«--» ------2010թ. N.----Ն որոշման

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԶԻՆԱՆՇԱՆԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Հեղինակ՝ Ալբերտ Սոխիկյան

Երևան քաղաքի զինանշանն ունի հետևյալ նկարագիրը.

Կապույտ ֆոնին հայերեն բրոնզագույն մեծատառերով մակագրված **«ԵՐԵՎԱՆ»** պատվանդանին կանգնած, գլուխը ետ շրջած, իշխանության խորհրդանիշ գավազանը բռնած առյուծն է: Նրա գլխավերևում թագն է, մեջտեղից բարձրացող կենաց ծառի խորհրդանիշ վարսանդով:

Առյուծի կրծքին, հավերժության նշանի վրա Արարատ լեռան պատկերն է:

Ողջ պատկերը երիզված է ուղղանկյունաձև վահանակով:

Գործածված են բրոնզագույն և կապույտ գույները:

ՀԱՎԵԼՎԱԾ N 2
Երևանի ավագանու
«--» ------2010թ. N.----Ն որոշման

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԴՐՈՇԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Հեղինակներ՝ Կարապետ Աբրահամյան,
Կարապետ Փաշյան

Երևան քաղաքի դրոշն ունի հետևյալ նկարագիրը.

Դրոշի ուղղանկյուն խաղապատկերն ընտրված է սպիտակ՝ որպես մաքրության, պարզության, անաղարտության միացյալ խորհրդանիշ: Կենտրոնում Երևանի զինանշանն է՝ շրջապատված 12 կարմիր եռանկյունիներով, որոնք խորհրդանշում են Հայաստանի 12 մայրաքաղաքները: Զինանշանի երանգը ծիրանագույն և բրոնզագույն է՝ կապույտով երիզված: Ազգային դրոշի գույները համահեղինակները օգտագործել են՝ ընդգծելու դրոշի մայրաքաղաքային նշանակությունը:

Դրոշի լայնության և երկարության չափերի հարաբերությունն է 1:2-ի: Սույն մասով նախատեսված Երևան քաղաքի դրոշի լայնության և երկարության հարաբերության չափերի պահպանմամբ կարող է օգտագործվել նաև փոքր կամ մեծ չափի դրոշ:

ՀԱՎԵԼՎԱԾ N 3
Երևանի ավագանու
«--» ------2010թ. N.----Ն որոշման

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՐՀՆԵՐԳԸ

Երևան քաղաքի օրհներգը կատարվում է հետևյալ երաժշտական խմբագրությամբ և տեքստով.

Խոսք՝ Պարույր Սևակի
Երաժշտությունը՝ Էդգար Հովհաննիսյանի

ԵՐԵՎԱՆ-ԷՐԵԲՈՒՆԻ

Երևան դարձած իմ Էրեբունի,
Դու մեր նոր Դվին, մեր նոր Անի,
Մեր փոքրիկ հողի, դու մեծ երազանք,
Մեր դարե կարոտ, մեր քարե նազանք:

ԿՐԿՆԵՐԳ- Երևան դարձած իմ Էրեբունի,
դարեր ես անցել, բայց մնացել ես պատանի,
Քո Մասիս հորով, քո Արաքս մորով,
Մեծանաս դարով, Երևան:

Մենք արյան կանչեր ունենք մեր սրտում,
Անկատար տենչեր ունենք դեռ շատ:
Մեր կանչն առանց քեզ՝ իզուր կկորչի,
Առանց քեզ՝ մեր տաք տենչն էլ կսառչի:

ԿՐԿՆԵՐԳ

Կյանքում ամեն սեր լինում է տարբեր
Իսկ մենք բոլորս ենք քեզնով հարբել,
Տաք է սերը մեր՝ շեկ քարերիդ պես
Հին է սերը մեր՝ ձիգ դարերիդ պես:

ԿՐԿՆԵՐԳ